Արձանագրություն N 2

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» «Դեկտեմբերի» 2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Բաբայան
Հանձնաժողովի անդամներ Վ.Վահանյան, Ա.Գևորգյան, Հ.Խուրշուդյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 26.11.25թ. հրապարակվել է հրավեր ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 11:00-ին: 2025 թվականի դեկտեմբերի 4-ին ժամը 11:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ	armedtechnicallc@gmail.com	02604367
2	«Իվաֆարմ» ՍՊԸ	Ivapharm89@gmail.com	08625799
3	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ	tenders@margpharma.com	00842845

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Բոլոր երեք մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

Բոլոր երեք մասնակիցների կողմից ներկայացված հայտերում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, անճշտություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը ARMEPS համակարգի միջոցով 09.12.2025թ. ծանուցել է

մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ

armedtechnicallc@gmail.com

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը մասնավորապես՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար՝ շտկել և հստակեցնել տեխնիկական բնութագրերը՝ ներկայացնելով Ձեր կողմից առաջարկվող ապրանքների հստակ տեխնիկական չափանիշները բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, բացառելով «պետք է լինի» բառակապակցությունը: Նաև շտկել և հստակ ներկայացնել ապրանքների որակի վկայականները՝ բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: 3-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է հստակեցնել բացառելով «պետք է լինի» և «կամ» արտահայտությունները: Շտկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 10.12.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ

tenders@margpharma.com

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար՝ շտկել և հստակեցնել տեխնիկական բնութագրերը՝ ներկայացնելով Ձեր կողմից առաջարկվող ապրանքների հստակ տեխնիկական չափանիշները բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, բացառելով «պետք է լինի» բառակապակցությունը, ինչպես նաև շտկել երաշխիքային ժամկետները, նշելով հստակ Ձեր կողմից առաջարկվող ապրանքների համար երաշխիքային ժամկետները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Նաև շտկել և հստակ ներկայացնել ապրանքների որակի վկայականները՝ բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: 3-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է հստակեցնել բացառելով "պետք է լինի" և "կամ" արտահայտությունները: Շտկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 10.12.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):

«Իվաֆարմ» ՍՊԸ

Ivapharm89@gmail.com

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների՝ մասնավորապես 1-ին և 2-րդ չափաբաժիններով Հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերով պահանջված «սեկտորային ֆազային տվիչի ապերտուրայի չափը ոչ ավել 25մմ-ի» չափանիշի դեպքում Ձեր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերով ներկայացված են «սեկտորային ֆազային տվիչի ապերտուրայի չափը 25,2մմ-ի» անհրաժեշտ է շտկել: Ինչպես նաև Ձեր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական տվյալների մասով համացանցում հասանելի տեղեկատվության համաձայն.

1) առաջարկված ուլտրաձայնային սարքավորման համար նախատեսված սեկտորային ֆազային տվիչները չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

2) տրապեցիոդային սկանավորման ծրագիրը համատեղելի է միայն գծային և կոնվեքսային տվիչների հետ և չի աշխատում սեկտորային տվիչների հետ:

3) PRF միջակայքը իմպուլս ալիքային դոպլերի ռեժիմում՝ PW-0,7-18,9 kHz-է Ձեր հայտով ներկայացված PW-0.5-27.9 kHz-ի փոխարեն

4) PRF միջակայքը դոպլերային սկանավորման ժամանակ՝ PW-0,2-6,3 kHz-է Ձեր հայտով ներկայացված PW-0.125-26 kHz-ի փոխարեն

5)«Տրիպլեքս ռեժիմում B+CFM պատկերի թարմացման առաջնահերթության կամ Դոպլերի հաճախականության սպեկտրի պատկերի ընտրության հնարավորություն» առկա չէ:

Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում և համացանցում առկա վերընշված չափանիշները տարբերվում են: Անհրաժեշտ է շտկել կամ հաստատել ներկայացված տեխնիկական բնութագրերը:

Շտկված հստակեցված տարբերակները սահմանված ժամկետում պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային հասցեին մինչև 10.12.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1804):

11.12.2025թ. բոլոր երեք մասնակիցները գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին ներկայացրել են պահանջված շտկումները: Գնահատող հանձնաժողովը գնահատելով ներկայացված շտկված փաստաթղթերը արձանագրել է, որ բոլոր երեք մասնակիցների կողմից իրականացված շտկումները կատարված են և մասնակիցների շտկված տարբերակները համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը՝

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի պահանջները շտկումներ ներկայացրած բոլոր երեք մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ա. Բաբայան)

04.12.2025թ. հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտին մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝

- «Իվաֆարմ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ 58,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով՝ 56,400,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 12.12.2025թ.-ից մինչև 21.12.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաբայան

Անդամներ՝ _____Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

_____Հ. Խուրշուդյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները

Չ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ					«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/507	4	12,000,000.00	48,000,000.00	38,400,000.00	0.00	38,400,000.00	9,600,000.00	9,600,000.00	46,800,000.00	0.00	46,800,000.00	11,700,000.00	11,700,000.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/508	4	14,000,000.00	56,000,000.00	44,800,000.00	0.00	44,800,000.00	11,200,000.00	11,200,000.00	55,800,000.00	0.00	55,800,000.00	13,950,000.00	13,950,000.00
3	էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/505	1	59,000,000.00	59,000,000.00			0.00	0.00	0.00	56,400,000.00	0.00	56,400,000.00	56,400,000.00	56,400,000.00

Մարզային առողջապահական կազմակերպությունների հագեցման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2025/76 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկները

Հ/Հ	Սարքավորման անվանումը	CPV կոդը	Քանակ	Նախահաշվային		Իվաֆարմ ՍՊԸ				
				Միավորի գին/ ՀՀ դրամ	Գնման գին/ ՀՀ դրամ	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/507	4	12,000,000.00	48,000,000.00	28,000,000.00	0.00	28,000,000.00	7,000,000.00	7,000,000.00
2	ուլտրաձայնային ախտորոշման սարքեր	33121260/508	4	14,000,000.00	56,000,000.00	30,000,000.00	0.00	30,000,000.00	7,500,000.00	7,500,000.00
3	էնդոսկոպիայի, էնդովիրահատական սարքեր	33161190/505	1	59,000,000.00	59,000,000.00			0.00	0.00	0.00